

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԳՐԻԳՈՐ, բժշկապետ (Թիֆլիսեցի),—ԵՍԼԵՐԱ ԵՒ
ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՆ. Հանրամատչելի զրոյց, Թիֆ-
լիս, տպարան «Արօր» Տ. Նազարեանի 1890 թ., փոքր քառածալ,
32 երես, տառ № 10. գինը 5 կոպէկ:

Այս մաքուր տպւած գրքովկում
նախ պատմւում է թէ ինչ է խօլե-
րան, որոնք են խօլերալի տարած-
ւելու միջոցները, ովքեր են աւելի
արամադրւած խօլերալով հիւանդա-
նալու. լետոյ գալիս է խօլերա հի-
ւանդութեան նկարագրութիւնը ու
հիւանդների հոգատարութիւնը, գէ-
ղինֆեկցիան, մինչև բժշկի գալը
հիւանդին օգնութիւն տալու եղա-
նակները և նախապաշտպանողական
միջոցների թւելը:

Անկասկած, ներկայումս շատ ի
դէպ է խօլերալի մասին ոչ միայն
պարբերական թերթերում հանրա-
մատչելի զրոյցներ տպելը, այլ նոյն
խսկ առանձին գրքովկներով ժողո-
ւրդական էժանագին գրքովկներ հրա-
տարակիլը ալը համաճարակումի մա-
սին. սակայն ժողովրդական հրատա-
րակութիւնները պէտք է ուրիշ կերպ
գրած, լարմարեցրած լինին, քան
լրագրում կամ ամսաթերթում տպած

ջողածները: Պարբերական հրատա-
րակութիւնների համեմատաբար նեղ
ընթերցող շրջանը ուրիշ պատրաս-
տութիւն և զարգացում ունի քան
ժողովուրդը, մասսան ընդհանրապէս,
որի մէջ հէնց գրքովկիս որքան կա-
րելի է ընդարձակ տարածելը առա-
ւել պէտք է ցանկալի լինէր, գոնեա
եթէ ուղինանք ճիշդ որ գործնական
լինել և մասսային պատրաստել խօ-
լերալի դէմ կռւելու. Քաղաքացին
կամ փոքր ի շատէ զարգացած ու-
նևոր դասը, ալսպէս թէ ալնպէս,
աւելի միջոցներ ունի խօլերալի նման
սարսափելի համաճարակումների ա-
ռաջը առնելու՝ քան ժողովրդի մաս-
սան՝ խաւար, աղքատ ու նախա-
պաշարւած գիւղացիք և արհեստա-
ւորները, որոնք բալորովին անօգնա-
կան են և առանց խորհրդատուների.
բալը սոցա խաւերում աւելի հեշտ է
կարող մուտք գործել մի որ և է փոք-
րիկ էժանագին բրօշիւր, քան լրա-

գիր կամ ամսագիր: Իսկ որպէս զի գիրքը մասսային գործնականապէս օգուտ տալ՝ պէտք է նա նորա հասկացողութեան չարմարեցրած լինի և մատչելի: Մի գրւածք կարող է բաւական պարզ և հասկանալի կերպով արտապատած լինել մտքերը սովորական—փոքրի չնոյն ինտելիգենտ ընթերցողի համար, և ահա ամենալին բուն ժողովրդի մարդուն մնալ դժար հասկանալի, եթէ նորա մտածողութեան և մտքերը արտապատելու ձևին չարմարեցրած չը լինի: Կարելի է գուհկաբանութիւններից հեռու մնալ, սակայն միտքը արտապատել գրեւ-կարդալ իմացող հասարակ մարդուն հասկանալի ձևով: միայն պէտք է դորա համար լինել պարզ, կարճ, հեռու աւելորդաբանութիւններից և ինտելիգենտին սովոր ոճերից: Բացի այդ, պատմածը դասաւորելիս պէտք է գործնական լինել, որպէս զի հեշտ ըմբռնւի խորհուրդը:

Այսպիսով չառաջ է գալիս երկու տեսակէտ «հանրամատչելի» հրատարակութիւնների մասին. կարելի է մի գրքով հրատարակելիս աչքի առաջ ունենալ կամ սովորական՝ ապաւէս ասած գրական, կիսաինքնակազմ ընթերցողներին, կամ թէ բուն ժողովուրդը, ստոր ընթերցող մասսան—գիւղացիներ, մշակներ, արհեստավորներ, տիրացուներ, մանր-մունր վաճառականներ, գործակատարներ, ծխական-դպրոցական կրթութեան տէր երիտասարդներ և այլն: Գլխաւորապէս այս վերջին տեսակի ընթերցողներին է պէտք, մեր կարծիքով, աչքի առաջ ունենալ «հանրամատչելի» գրքովներ հրա-

տարակելիս, նա մանաւանդ երբ պէտք է գրւածքը գործնական նպատակների հասնի:

Նախելով առաջին տեսակէտից, բժշ. Տէր-Գրիգորեանցի «խօսերա» գիրքը գրւած է թեթև և հետաքրքրական լեզուով և կարող է հասնել իւր նպատակին, ախրնքն՝ «բացատրել ինչ է խօսերան և ինչպէս կուել նրա դէմ»: Սակայն, ինչպէս երևում է, երկրորդ, և մեր կարծիքով աւելի համապատասխան տեսակէտը, չէ ունեցել հեղինակը սոյն գրքովը հրատարակելիս, թէ ոչ ամբողջ գրւածքի լեզուն՝ թէ բառերի, թէ ոճերի և թէ արտապատելու ձևի կողմից՝ աչքան դրական ինտելիգենտալին չէր լինի՝ որպէս զի հասարակ դասին լիապէս մատչելի չէ: Աւելորդ կը լինէին այն ժամանակ մի քանի շեղումներ (օր. եր. 5, 8, 9) և նոյն իսկ հատուածների վերնագիրները այն կերպ գրւած կը լինէին, որ հէնց վերնագիրը ինքը ուշադրութիւն դարձնէր սկզբից նորա մասին ինչ բացատրւելու է. օրինակ, փոխարէն գրելու «Ինչ է խօսերան», կը գրւէր «խօսերան վարակիչ հիւանդութիւն է», և ապա դատողութիւններով այդ կը պարզւէր, կամ փոխարէն հատուածի գլխին դնելու «խօսերալի տարածւելու միջոցները» և լեռոջ չաջորդ երեսների մէջ ցուց տալու այդ միջոցները, առաւել չարմար կը լինէր ուղղակի գրել, դիցուք՝ «խօսերան տարածւում է մարդկանց, ջրի, կերակրեղէնների և ճանների միջոցով»—թէ ոչ լեռոջ, երբ արդէն բացատրութիւններն են գալիս, հասարակ ընթերցողը նոցա մէջ մոլորւում է և կորցնում էական կէտերը:

Այս կերպ գրած վերնագիրները շեշտելով էականը արձաճ են մեծ չեն կարող գուրս գալ, երբ ասելի որոշ, կարճ և բուն խնդրին վերաբերեալ գրած կը լինի իւրաքանչիւր հաստատած. օրինակ՝ «մինչև բժշկի գալը հիւանդին օգնութիւն տալու եղանակները» հաստատում չը պէտք է լինէր թէ հիւանդի առողջանալու ժամանակ ինչ օգտակար կը լինի, մինչև բուժօգնութիւն առողջանալու թիւն ղեկտա պիտի պահի, կամ եթէ հիւանդը մեռնում է, դիակի հետ ինչ անել և ալլն (տես եր. 25): Հաս-

կանալի է, որ այս ամենը շատ լաւ խորհուրդներ են, սակայն կապ չ'ունին «մինչև բժշկի գալը» տալիք օգնութեան հետ: Մի խօսքով բոլոր գրածքի ձևը և շինածքը ուրիշ կը լինէին, եթէ գլխաւորապէս երկրորդ տեսակի ընթերցողներին ի նկատի ունենալին այս օգտակար գրքովի հրատարակիչները: Այնու ամենաւել և ներկայումս «Խօսերա» բրոշիւրը շատ ժամանակին է գուրս գալիս և ցանկալի է նորա լայն տարածումը մեր երկրի ամեն անկիւններում:

Լ. Ս.

ԲՕԴԵՆՇՏԵԴՑ, ՖՐԻԴՐԻԽ, Ֆօն — «ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՄ ԿԵԱՆՔԻՑ».
I և II հատոր: Հրատարակութիւն «Դերմանական գրականութեան
ընդհանուր ընկերութեան». Բերլին. 1890 թ.

Հայ ընթերցող հասարակութեանը ոչ մի այժմուս գերմանացի նշանաւոր գրականագէտի անուն արժան ծանօթ չէ, որքան Ֆրիդրիխ Ֆօն Բօդենշտեդտինը: Հալկական աշխարհի հետ նա մի քանի իւր համար նշանաւոր րոպէներով է կապւած: Դեռ ևս երիտասարդ, 40 թւականներում նա արցւից Կովկասը, գնաց Սրեան, Էջմիածին: Նա մեծ տպաւորութիւններով վերադարձաւ մեր երկրից, և ալք տպաւորութիւնները, որպէս մենք ալք գիտենք անձնական ծանօթութիւնից, վառ են նորա մէջ ալք, որպէս ասելի քան քառասուն տարի առաջ: Կովկասում նա ծանօթացաւ Միրզա Շաֆֆիի հետ, որի անունով նա դրեց արեւելեան ճաշա-

կով ալն սքանչելի բանաստեղծութիւնները, որոնք լատին են նաև շատ հեռու շրջաններում: Իւր ճանապարհորդական մի քանի տպաւորութիւնները նա դրեց «Ճանապարհորդութիւն դէպի Հայաստան» վերնագրով, որ նաև «Մուրճ»-ի ընթերցողներին իւր լուսածնով լատինի դօքտ. Յովհաննէս Բարխուդարեանց թարգմանօրէն տպել է «Հանդէս Գրականական և Պատմական» Մօսկալի կիսամեա հանդիսի երկրորդ գրքում (1889 թ.): Բօդենշտեդտը լատին է մեզ, վերջապէս, իւր գրախօսական նկատողութիւններով պ. Աբգ. Յովհաննիսեանի հրատարակած «Հալկական Դարադարանի» գերմաներէն գրքերի մասին: Աղբքանը, ինչ ուզ-